

ՀԱՅ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի նիստի համառոտ ներկայացում
Մայիսի 16, 2007, ժամը 15:10-17:00, ՀԱՅ-Հայաստան գրասենյակ

Օրակարգի հարց	Համառոտ նկարագրություն	Որոշում
<p>1. ՀՀ խորհրդարանական ընտրությունների ընթացքի և արդյունքների քննարկում քաղաքացիական հասարակության ներգրավվածության տեսանկյունից.</p>	<p>Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ խորհրդարանական ընտրությունների մասին շատ էր խոսվել, ՇԽ անդամները առաջարկեցին ՀՄԿ Հայաստանյան ծրագրի տնօրեն Ա. Ռասիմին ներկայացնել ՀՄԿ դիրքորոշումը ՀԱՅ ծրագրի շարունակելիության առումով: Ա. Ռասիմը նշեց, որ ՀՄԿ Գործադիր խորհուրդը որևէ պաշտոնական դիրքորոշում դեռ չի ներկայացրել:</p>	<p>Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ որոշվեց՝ ի գիտություն ընդունել Ա. Ռասիմի կողմից ներկայացված հայտարարությունը առ այն, որ ՀՄԿ Տնօրենների Գործադիր խորհուրդը որևէ պաշտոնական հայտարարություն չի ներկայացրել ՀՀ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ և առաջնորդվել Գործադիր խորհրդի կողմից ներկայացվելիք հետագա գնահատականներով:</p>
<p>2. Շահառուների խորհրդի անդամների ընտրական գործընթացի կազմակերպման ներկա ընթացքի ներկայացում և քննարկում.</p>	<p>ՇԽ ընտրական կարգը մշակող աշխատանքային խմբի անդամ Հ. Ջավադյանը նշեց, որ կարգը մշակման փուլում է և շուտով կներկայացվի քաղաքացիական հասարակության քննարկմանը:</p>	<p>Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել ՇԽ ընտրական կարգի մշակման հետևյալ առաջիկա գործողությունները և առաջնորդվել դրանցով.</p> <p>ա) ՇԽ անդամներից (Հ. Ջավադյան, Ն. Վարդանյան, Ա. Ոսկանյան) բաղկացած խումբը մեկ շաբաթվա ընթացքում կմշակի ՇԽ ընտրական կարգի նախագիծը, որը կներկայացվի լայն քաղաքացիական հասարակության քննարկմանը և բաց կլինի դիտողությունների և առաջարկությունների համար ;</p> <p>բ) քաղաքացիական հասարակությանը կտրամադրվի 10 աշխատանքային օր կարգի վերաբերյալ իրենց դիտողությունները և առաջարկությունները ներկայացնելու համար;</p> <p>գ) լրամշակված տարբերակը կներկայացվի ՇԽ և լայն քաղաքացիական հասարակության քննարկմանը;</p> <p>ե) հանձնարարել Ա. Հովսեփյանին ուսումնասիրելու ՇԽ ընտրական կարգի հաստատման վերաբերյալ Համաձայնագրի և Համաձայնագրից բխող այլ պայմանագրային կետեր և քննարկել դրանք ՇԽ անդամների հետ:</p>

<p>3. Շահառուների խորհրդի մարզային կենտրոնների ստեղծման առաջարկության քննարկում (ներկայացված ՇԽ անդամ Լևոն Ներսիսյանի կողմից)։</p>	<p>ՇԽ անդամ Լ. Ներսիսյան ներկայացրեց ՀՀ մարզերում գործող երիտասարդական կենտրոնների հիման վրա ՀԱՀ ծրագրի մարզային ռեսուրս կենտրոնների ստեղծման առաջարկությունը: Մասնակիցները առաջարկեցին չսահմանափակվել երիտասարդական կենտրոններով, այլ տեղեկատվական աջակցություն ցուցաբերել բոլոր շահագրգիռ ՀԿ-ներին:</p>	<p>Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ որոշվեց չմերժել մարզային երիտասարդական կենտրոններում ՀԱՀ-Հայաստան ծրագրի տեղեկատվական աջակցության կենտրոններ ստեղծելու Լ. Ներսիսյանի կողմից ներկայացված առաջարկությունը և հետագայում այս հնարավորությունը ներկայացնել նաև մարզային քաղաքացիական հասարակությանը և աջակցություն ցուցաբերել բոլոր հետաքրքրված կազմակերպություններին:</p>
<p>4. Ենթակառուցվածքներ բաղադրիչի շրջանակներում “Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում” խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար գնահատման, ինչպես նաև Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման մասնագետի ընտրական հանձնաժողովների կազմում Շահառուների Խորհրդի ներկայացուցիչի ընտրություն և հաստատում:</p>		<p>Համապատասխան անդամների ընտրությունը հաստատվեց:</p>